ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» փետրվարի 2014թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 954-967-րդ հոդվածներով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ «Ս. Սարգսյան և գործընկերներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման պայմանագիր կնքելու և Ընկերությունում ներդրումներ կատարելու առաջարկին:

2.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնել «Ս. Սարգսյան և գործընկերներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ հավատարմագրային կառավարիչ) հավատարմագրային կառավարմանը՝ 5 տարի ժամկետով:

2) Երևանի անունից կնքել Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիրը (այսուհետ նաև՝ պայմանագիր), հանդես գալով որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, պայմանագրում ներառելով նաև հետևյալ դրույթները.

ա. հավատարմագրային կառավարչի կողմից ներդրումներ կատարելու պարտավորությունը, այդ թվում՝ ներդրման գումարի չափը, ժամկետները, ներդրումներ կատարելու եղանակը և այլ անհրաժեշտ պայմաններ՝ ներդրումներ կատարելու

պարտավորությունն ապահովելու, ինչպես նաև անհրաժեշտ հսկողություն իրականացնելու համար.

բ. առանց հավատարմագրային կառավարման հիմնադրի գրավոր համաձայնության չօտարել, գրավ չդնել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը:

3. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանել, որ հավատարմագրային կառավարիչն ընդունում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան Ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները, այն է.

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված որոշումները գրավոր ձևով, հետևյալ հարցերով միանձնյա ընդունելու իրավունքը.

ա. Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

գ. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

դ. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ե. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

զ. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

է. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

ը. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

թ. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

ժ. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը:

4. Սահմանել, որ պայմանագրով հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած երկարաժամկետ (10 տարի) ներդրումային պարտավորությունների իրականացման 5-րդ տարում դրանք տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված չափով և ժամկետում լիովին ու պատշաճ կատարելու պարագայում, Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիրը համարվում է երկարացված նույն ժամկետով և պայմաններով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը գտնվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Բուժհաստատությունում մատուցվում են արտահիվանդանոցային ծառայություններ պետական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով՝ 7821.3 մ^2 տարածք զբաղեցնող շենքում: Բուժհաստատության սարքավորումների մեծ մասն արտադրվել են դեռևս խորհրդային տարիներին, որոնք հնարավորություն չեն ընձեռում մատուցել ժամանակակից պահանջներին համապատասխան բուժօգնություն: Դրանով պայմանավորված՝ պոլիկլինիկայում սպասարկվող ազգաբնակչության մի մասը գերադասում է բուժօգնություն ստանալ այլ բուժհաստատություններում ավելի ճիշտ ախտորոշվելու, բուժումն արդյունավետ կազմակերպելու և հիվանդությունը վաղ ժամկետներում կանխելու նպատակով: Այսինքն, ազգաբնակչության առավել վճարունակ հատվածը գերադասում է մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող բարձրորակ ծառայությունները, որոնք չեն կարող մատուցվել բուժհաստատության կողմից: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ գնալով մեծանում է տարբերությունը մասնավոր հատվածի և քաղաքային պոլիկլինիկաների կողմից մատուցվող ծառայությունների որակի միջև: Դա իր արտացոլումն է գտնում ինչպես մասնավոր հատվածի բուժհաստատությունների կողմից հավաքագրվող ազգաբնակչության թվաքանակի աճի միտումում, այնպես էլ սպասարկված հաճախումների թվաքանակում: Այս միտումը հատկապես արդիական է «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի պարագայում, քանի որ վարչական շրջանում գործում են ժամանակակից սարքավորումներով հագեցած արտահիվանդանոցային և հիվանդանոցայի ծառայություններ մատուցող բուժհաստատություն:

Վերջին տարիների, չնայած բուժհաստատության ֆինանսական գործունեության արդյունքում շահույթի գոյացմանը, շահութաբերության ցուցանիշի մակարդակը շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա, այսպես 2010-2012 թվականների

շահութաբերության միջին ցուցանիշը կազմել է 1.4%: Համաձայն ներկայացված ներդրումային ծրագրի՝ շահութաբերության միջին ցուցանիշը 2014-2023 թվականների համար կազմելու է 9.36%, ինչը գերազանցում է 2010-2012 թվականների միջին ցուցանիշը շուրջ 6.7 անգամ: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև բուժաշխատողների անընդհատ վերապատրաստման և մասնագիտական ունակությունների կատարելագործում հայաստանյան և արտասահմանյան համապատասխան հաստատություններում:

Ընկերության կողմից ներկայացված հավատարմագրային կառավարման ծրագրով նախատեսվում է 2014-2018թթ. բուժհաստատությունում ներդնել 320.0 մլն դրամ, որից 198.3 մլն դրամը կամ ներդրումների շուրջ 62%-ը կուղղվի նոր սարքավորումների ձեռքբերմանը, 90.0 մլն դրամը կամ ներդրումների 28%-ը՝ բուժհաստատության վերանորոգմանը և կահավորմանը, իսկ մնացած 31.7 մլն դրամը կամ ներդրումների 10%-ը՝ կադրերի վերապատրաստմանը և գովազդային միջոցառումների իրականացմանը:

Ներդրումների իրականացման արդյունքում ակնկալվում է 17 նոր մասնագետների ներգրավվում, ինչպես նաև բուժաշխատողների աշխատավարձի աճ: Այսպես, բացի պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչներով նախատեսված աշխատավարձից, նախատեսվում է նաև վճարովի ծառայություններից բուժաշխատողներին խրախուսական վարձատրում: Նշված միջոցառումների արդյունքում միայն վճարովի ծառայություններից բոնուսային վարձատրման արդյունքում բժիշկների միջին աշխատավարձի աճը կկազմի 55% (91.0-141.0), բուժքույրերինը՝ 51% (57.0-86.0), կրտսեր բուժանձնակազմինը՝ 58% (53.5-84.3):

Այսինքն նշված ներդրումային ծրագրի իրականացման դեպքում հնարավոր կլինի Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ ունենալ ժամանակակից սարքավորումներով հագեցած (թվային ռենտգեն համակարգ, մամոգրաֆիկ ռենտգեն համակարգ, ուլտրաձայնային թվանշանային, գունավոր ախտորոշիչ սարք, էլեկտրոէնցեֆալոգրաֆ, հոլտեր էլեկտրասրտագիր, իմունոլոգիական, բիոքիմիական, արյան ավտոմատ լաբորատոր վերլուծիչներ, մանրէաբանական լաբորտորիայի

լրակազմ, կոագուլոմետր, ատամնաբուժական համակարգ), վերանորոգված և ժամանակակից պահանջներին համապատասխան արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող բուժհաստատություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում 10 տարիների ընթացքում կվճարվի 124.2 մլն դրամ շահութաբաժին, իսկ ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ